



«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի
EduArmenia կրթական նախաձեռնություն

Երևանի Հ.Գալաթյանի N 83 ավագ դպրոց ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Նոր բառերի ներմուծման եղանակների օտար լեզվի դասերին

Առարկա՝ Անգլերեն

Մասնակից՝ Անահիտ Սարգսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գլուխ 1 Օտար լեզվի բանավոր հաղորդակցության ուսուցման գործընթացի կարևորությունը.....	5
Գլուխ 2 Նոր բառերի ներմուծման մեթոդները օտար լեզվի դասերին.....	11
Եզրակացություն.....	19
Օգտագործված գրականության ցանկ.....	21

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Տեխնոլոգիաների զարգացման արդի ժամանակաշրջանում օտար լեզվի դասավանդման խնդիրները նոր մարտահրավերներ են առաջադրում արդի տեսաբաններին: Լեզվի ուսուցման ընթացքում կիրառվում են տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ, փորձ է արվում մշակելու դասավանդման նոր ձևեր, մեթոդներ, մոտեցումներ և այլն:

Ժամանակակից կրթական համակարգի և հանրակրթական դպրոցի գերխնդիրն է այնպիսի անձի ձևավորումը, որն ապրելու և գործելու է աշխարհաֆառաֆական նոր պայմաններում: Այս հանգամանքը ակնհայտ է դարձնում օտար լեզվի՝ որպես միջազգային և միջմշակութային հաղորդակցման գործոնի կարևորությունը: Ուստի ներկա դասագրքերի հայեցակարգի հիմքում ընկած է օտար լեզվի դասավանդման ընթացքում անհատի անձնական և մասնագիտական ձևավորման մասին դրույթը:

Ժամանակակից Եվրոպայի կրթական ֆառաֆականությանը բնորոշ առանձնահատկություններից է միջմշակութային հաղորդակցման հմտությունների ձևավորումը, ինչը ապահովում է հասարակական օվումների համապատասխան մակարդակը: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է օտար լեզուների իմացություն:

Օտար լեզվով բանավոր խոսքի ընկալումը լեզվի իմացության հիմնարար բաղադրիչներից է և դրա ուսուցումը իրավամբ կազմում է օտար լեզվի դասավանդման հենասյուներից մեկը: Օտար լեզուների դասավանդման արդի մեթոդիկայի կարևորագույն խնդիրներից մեկը բանավոր խոսքի տիրապետումն է: Դա շատ բնական է և հասկանալի, որովհետև լեզու ասելով՝ մենք նախ և առաջ հասկանում ենք բանավոր խոսք, որի գերագանց, հասարակական դերն անվիճելի է: Սակայն այս միտքը չպետք է աղավաղել՝ վերածելով օտար լեզվի ուսուցումը սոսկ մեքենայական հարց ու պատասխանի, բանավոր խոսքի մակերեսային և միակողմանի տիրապետմանը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել օտար լեզվի դասերին նոր բառերի ներմուծման և ուսուցման մեթոդները:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններ բաժնից և օգտագործած գրականության ցանկից:

Գլուխ 1 Օտար լեզվի բանավոր հաղորդակցության ուսուցման գործընթացի կարևորությունը

Օտար լեզվի բանավոր հաղորդակցության ուսուցումը բարդ համակարգ է, որը ներառում է մի շարք մտավոր գործընթացներ՝

- ✓ նոր տեղեկատվություն ընկալելը,
- ✓ մտապահելը,
- ✓ հանաչելը,
- ✓ մշակելը
- ✓ փոխանցելը:

Սրանցից յուրաքանչյուրն էլ իր հերթին ներկայացնում է ֆիզիկական և մտավոր ունակությունների և գործողությունների համադրություն՝ պայմանավորված մի շարք հատկանիւշներով՝ սովորողի տարիքը, մտավոր ներուժը, աշխարհայացքը, ընդհանուր գիտելիքները, լեզվամտածողությունը, լեզվագագացողությունը և այլն: Օտար լեզվի բանավոր խոսքի ուսուցման գործընթացի

արդյունավետությունը ապահովելու համար շատ կարևոր է առանձնացնել լեզվական կոմպետենցիայի այն բաղադրիչները, որոնք սահմանագծվում են անգլերեն լեզվի բանավոր և գրավոր խոսքում: Դրանք են՝ բառապաշարը, ֆերականությունը, հնչյունաբանությունը¹:

Մերոպաբանական գրականության մեջ տարբերակվում են լեզվի ուսուցման երեք առանցքային մոտեցումներ՝

- կառուցվածքային (լեզուն դիտարկվում է որպես ֆերականական տարրերի կապակցման համակարգ),
- գործառական (լեզուն դիտարկվում է որպես որոշակի գործառույթների արտահայտման և իրականացման գործիք),
- ինտերակտիվ (լեզուն դիտարկվում է որպես սոցիալական հարաբերությունների ստեղծման ու հաստատման միջոց):

Նաղաարտասանական հմտությունների ձևավորումը երկլեզվյան պայմաններում տեղի է ունենում մայրենի և օտար լեզուներից ձեռք բերած հմտությունների առկայությամբ: Օտար լեզվի ուսումնասիրությանը ձեռնամուխ լինելիս, սովորողները արդեն տիրապետում են մայրենի լեզվի լսողարտասանական հմտություններին: Այս պատճառով սկսնակը օտար լեզվի հնչյունների ընկալման և արտասանման ժամանակ գտնվում է մայրենի լեզվի ազդեցության տակ, այսինքն տեղի է ունենում ինտերֆերենցիա՝ օտար լեզվով արտասանվող հնչյուններն ու հնչերանգային միավորները, սովորողը նմանեցնում է մայրենի լեզվին:

Մայրենի լեզվի բացասական ներգործության վերացման համար լսողատեսողական հմտությունների ձևավորումը կատարվում է երկու լեզուների մայրենի և օտար, ինչպես նաև ուսուցիչի հնչյունական համակարգերի համագրական վերլուծության հիման վրա, որը թույլ է տալիս կանխատեսել սովորողների հնարավոր դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները:²

Արտասանական հմտությունների յուրահատկությունը կախնում է լսողական և հնչյունաբանական հմտությունների սերտ միասնության մեջ: Բարձրագույն խոսքի անպայմանորեն ուղեկցվում է լսողական զգայարանի վերահսկողությամբ, որը հենվում է խոսողի երկարատև հիշողության մեջ ամրապնդված համապատասխան պատկերների վրա՝

Սովորողների արտասանության ձևավորումը մեծապես դժվարանում է նրանով, որ ուսումնասիրվող լեզվի հնչյունային համակարգի նկարագրության ոչ բոլոր սովորողներն են հնարավոր ներգրավել ուսուցման պրոցեսում:

¹ Harmer J., How To Teach English, Pearson, Longman, 2010. 288 p.

² Նույն տեղում

Օրինակ՝ ոչ միշտ է նպատակահարմար օգտվել արտասահման օրգանների դիրքի նկարագրությունից, քանի որ սովորողները չեն գիտակցում մայրենի լեզվի հնչյունների արտաբերման եղանակները:

Արտասահմանյան ձևավորման հիմնական եղանակը ընդօրինակումն է (լմխտացիա): Ընդօրինակումը ենթադրում է նմուշի հիման վրա հնչյունի, բառի և նախադասության վերարտադրում:

Հնչյունաբանության ուսուցումը ներառում է լեզվի նյութական կողմը հանդիսացող հնչյունական նմուշների ամբողջությունը, այսինքն հնչյունները, հնչյունակապակցություն-ՆԵՐՈՂ, ԵԵԵՄԸ, ՌԻՔՄԸ, մեղեդայնությունը, հնչերանգը, դադարները:

Միջնակարգ դպրոցում հնչյունաբանության ուսուցման հիմնական նպատակը լսողարտասահման հմտությունների ձևավորումն է: Արտասահման հմտությունները խոսե-ԼՈՒ, ունկնդրելու և ընթերցելու անկապտելի մասն են կազմում: Այսպիսով, լեզվի հնչյունային կազմի տիրապետումը հաղորդակցման պարտադիր պայման է:

Եթե լսողը չի տիրապետում արտասահման հմտություններին, նա չի հասկանա կամ դժվարությամբ կըմբռնի իրեն ուղղված խոսքը: Միայն կայուն արտասահման հմտությունների առկայությամբ է ապահովվում խոսքային գործունեությունը: Սրանով էլ բացատրվում է միջնակարգ դպրոցում արտասահմանյան ուսուցման կարևորությունը:

Սակայն հնչյունաբանությունը դպրոցում չի ուսումնասիրվում որպես ինքնուրույն առարկա: Սովորողները բանավոր և գրավոր խոսքը զարգացնելու համար պետք է տիրապետեն արտասահման հմտություններին; Դպրոցում անթերի արտասահմանյան ձևավորելը չափազանց դժվար իրագործելի խնդիր է: Այդ պատճառով դպրոցին ներկայացվում է մոտավոր պահանջ, այն է բնական արտասահմանյանը առավելագույն չափով մոտենալու պահանջը (ապրոֆսիմացիա):

Այս նպատակով, առաջին հերթին, սահմանափակվում է հնչյունաբանական նյութի ծավալը, և երկրորդ, թույլատրվում է առանձին հնչյունների արտասահմանյան որակի իջեցում ե որոշ հնչյունների մոտավոր արտաբերում:

Սակայն նշված երկու գիջումներն էլ թույլատրելի են միայն բանավոր հաղորդակցման ընդհանուր միտքը չխախտելու պայմանով:

Սովորողների արտասահմանյանը ներկայացվող հիմնական պահանջներն են հնչյունայնությունն ու սահունությունը:

Առաջինը պայմանավորված է խոսքի հնչյունային բնույթով, որը կարող է նպաստել խոսակցի արտահայտած միտքը ճիշտ ըմբռնելուն: Երկրորդը արտասահման հմտություններ ավտոմատացման աստիճանն է, որը սովորողներից պահանջում է նորմալ տեմպով խոսք (անգլերենի և ֆրանսերենի համար բազմաթիվ 120—150 բառ, գերմաներենի համար՝ 110 - 130):

Սովորողների խոսքի ըմբռնելիությունը ապահովելու հա-ՄԱՐ անհրաժեշտ է տիրապետել ոչ միայն իմաստատարբերակիչ հնչյունների, այլ նաև նախադասությունների տարբեր տիպերի հիմնական հնչերանգին;

Այլ կերպ ասած, առաջինը պետք է կարողանա հետոքեն ձևակերպել նախադասությունը շեռտի, ուղիղի, մեղեդայնության և դադարների տեղաբաշխման առումով:

Արտասանության բովանդակության ընտրության հիմնական սկզբունքը հաղորդակցման պահանջներին համապատասխանելու սկզբունքն է³:

Դպրոցում չեն ուսումնասիրվում տարբեր տեսակի բառարանային թեֆունները և խոսակցական կրճատված ոճը:

Ընտրված հնչյունաբանական նյութի ուսումնասիրման հերթականությունը որոշվում է ուսուցման տվյալ աստիճանում խոսքի զարգացման պահանջներով: Ամբողջ հնչյունաբանական նյութի ծանոթացումը տեղի է ունենում ուսուցման առաջին աստիճանում՝ հիմնականում 4-րդ դասարանում:

Այս պատճառով էլ առաջինի խնդիրը արտասանական հիմք ստեղծելն է, որը ենթադրում է լսողարտասանական հմտությունների ավտոմատացում:

Արտասանության ուսուցումը ինֆանպատակ չէ: Սկզբնական փուլում այն դառնում է ուշադրության առարկա և հանդիսանում է աշխատանքի բոլոր ձևերի պարտադիր բաղադրիչը:

Արտասանության նկատմամբ ուշադրությունը պետք է պահպանվի հետագա աստիճաններում և, չնայած, որ սովորողների առջև ծառայող արտասանական պրոբլեմները գնալով նվազում են: Արտասանական հմտությունների ավտոմատացումը երկարատև պրոցես է և հետագա հատուկ աշխատանքի բացակայության դեպքում կարող է 4-րդ դասարանում ձեռք բերված հմտությունների կորուստ տեղի ունենալ:

Սովորողները ծանոթանում են նոր բառային և ֆերականական նյութին, որի յուրացումը կախված է համապատասխան հնչյունաբանական պատկերների հստակությունից և կայունությունից:

Եթե 4-րդ, 5-րդ դասարաններում սովորողները ծանոթանում են նոր նյութին, ապա հետագա աստիճաններում աշխատանքն ուղղվում է ձեռք բերված հմտությունների ու կարողությունների ամրապնդմանը և սխալների կանխմանը:

Պետք է հաշվի առնել, որ լեզվական նյութի լսողական ընկալումը կարող է լինել աղավաղված և նույնիսկ սխալ: Սա բացատրվում է նրանով, որ խոսքը լսողի կողմից ընկալվում է միմիայն իր ներքին խոսքի առանձնահատկությունների պրիզմայով: Հնչյունները, որոնց սովորողը տիրապետում է, պահպանվում են նրա խոսքային մեխանիզմի կազմում, այսպես կոչված, հնչյունային ցանցի ձևով: Եթե

³ Beare K., Teaching grammar in an ESL/EFL Setting. – The Internet TESL Journal, Vol. X, N 7, July, 2004, Available: <http://iteslj.org>.

ընկալվող հնչյունները գրանցված են այդ հնչյունային ցանցում, ապա դրանց ընկալումը հիշտ է կատարվում, իսկ եթե դրանք բացակայում են, ապա հիշտ չեն ընկալվում և խոչընդոտում են ընկալվող լսողական և հետո նաև հնչյունախոսաբանական պատկերի ստեղծմանը⁴:

Վերոհիշյալը ցույց է տալիս, որ ընդօրինակումը, որպես նոր բառերի տիրապետման միջոց, նույնպես ունի լուրջ սահմանափակումներ: Այս պատճառով արտասանության ուսուցման ժամանակ ընդօրինակումը գուցակցվում է վերլուծաբանական ուղիով:

Այս կամ այն եղանակի գործածությունը որոշվում է ուսումնասիրվող բառի կոնկրետ առանձնահատկությամբ: Ռիթմահնչաբանական հմտությունների ձևավորման ուղղությամբ տարվող աշխատ անհում նույնպես օգտագործվում են ինչպես նկարագրությունը, այնպես էլ ընդօրինակումը:

Առանձին հնչյունների և դրանց միացությունների տիրապետումը նպաստում է ուսումնասիրվող լեզվի առավել ընդհանուր արտասանական օրինաչափությունների խմացությունը և գործնական յուրացմանը: Նկատի են առնվում մասնավորապես այն հնչյունները, որոնք բացակայում են մայրենի լեզվի հնչյունական համակարգում:

Այսպես, հայ սովորողներին, որոնք տիրապետում են նաև ռուսերենին, հեշտ է յուրացնել այն երևույթը, որ անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուներում չի թույլատրվում բաղաձայնների փոփոխում, իսկ անգլերենում և ֆրանսերենում ձայնեղ բաղաձայնի խլացում բառավերջում և խուլ բաղաձայններից առաջ: Անգլերենում և գերմաներենում շատ կարևոր են ձայնավորների երկարության և կարճության պահպանումը, իսկ գերմաներենում և ֆրանսերենում՝ բաց և փակ բաղաձայնների հակադրությունը: Ինչ վերաբերում է ֆրանսերենին, ապա այդ կանոնը տարածվում է նաև ռեզյանների վրա: Գերմաներեն ուսումնասիրողները պետք է տիրապետեն ուժեղ շեշտով ձայնավորների արտասանությանը: Անգլերեն և գերմաներեն լեզու ուսումնասիրողները պետք է վարժվեն խոսքում երկու շեշտերի գոյության հնարավորությանը: Թվարկված դժվարությունները հիմնականում ծագում են, երբ սովորողների ուսուցումը կենտրոնացվում է խոսքի բն-վանդակության վրա: Այդ պատճառով էլ այս օրինաչափություններին տիրապետելու համար պահանջվում է մշտական աշխատանք ուսուցման ողջ պրոցեսում:

Սովորողների երկարատև հիշողության մեջ հնչյունների և հնչույթների կայուն պատկերների ստեղծման նպատակով կարևոր է ֆոնոգրամների օգտագործումը, որոնք կարելի է բազմաթիվ անգամ լսել առանց որակի փոփոխության:

Պակաս կարևոր չէ սովորողի խոսքի ձայնագրումը: Սեփական խոսքի ձայնագրություն լսելն օգնում է նրան իր արտասանությունը լսել կողմից, համեմատել այն հիշտ նմուշների հետ և ուղղում կատարել:

⁴ Beare K., Teaching grammar in an ESL/EFL Setting. – The Internet TESL Journal, Vol. X, N 7, July, 2004, Available: <http://iteslj.org>.

Ինչպես արդեն նշվել է, լսողաբարասանական հմտությունների առանձնահատկությունը պահպանվում և ամրապնդվում է, երբ հնչյունային հատվածների ընկալումը և արտաբերումը պետք է իրականանա ենթագիտակցաբար, ընթանատեմպով և չդժվարացնի բանավոր հաղորդակցումը:

Գլուխ 2 Նոր բառերի ներմուծման մեթոդները օտար լեզվի դասերին

Նախքան նոր բառի ներմուծումը, անհրաժեշտ է մշակել և հստակեցնել ռազմավարություն, որը ներառում է հետևյալ փուլերը՝

- բառի ներկայացում/բացատրում,
- բառի մտապահում/ամրապնդում,
- բառի գործածում հաղորդակցության մեջ⁵:

Բառապաշարային գիտելիքները զարգացնող ռազմավարությունները անընդհատ փոփոխվում, համարվում են նոր վարժություններով, քանի որ ժամանակի հետ փոխվում են նաև ուսուցման մեթոդները, մոտեցումները, նպատակներն ու հասարակական պատվերը:

Բառապաշարի ուսուցումը լեզվակրթության առանցքն է, առանց որի անհնար է սվյալ լեզվով հաղորդակցվելը: Հաղորդակցությունը բարելավվում է ամենից առաջ բառապաշարի հարստացմամբ և ճիշտ գործածությամբ: Կարևոր են նաև սովորողների քերականական, հնչյունաբանական գիտելիքները, ինչպես նաև հանրամշակութային, գործաբանական, խոսույթային, փոխհատուցման կարողությունները:

Այսօր, երբ սովորողների հետաքրքրությունները բազմազան են ու բազմապիսի, էական է օտար լեզվի ուսուցումը հնարավորինս հանելի ու հետաքրքիր կազմակերպելը: Այս կապակցությամբ նոր բառեր ներմուծելիս մենք չպետք է բավարարվենք ուսուցման ավանդական մեթոդներով ու միջոցներով, այլ փորձենք ներկայացնել հնարավորինս նոր ու հետաքրքիր լուծումներ՝ բառապաշարը ուսուցանենք հաղորդակցական համատեքստում, փոխներգործուն միջավայրում: Այսպես, դիտարկենք «ԿՌԱՀԻՐ ԻՄԱՍՏԸ – Մտեր, որ մեզ օգնում են ապրելու» վարժությունը – “GUESS THE MEANING, Gaps and guessing: Thoughts that help us to live”. Նշենք, որ աշակերտները սովորաբար հաճույքով են կատարում այս վարժությունը, հատկապես, եթե ուսուցիչը նախօրոք ներկայացնում է ֆինալիման թեման:

1. Սահմանված ժամանակաշարը՝ տասը րոպե:
2. Ընթացքը:

⁵ Beare K., Teaching grammar in an ESL/EFL Setting. – The Internet TESL Journal, Vol. X, N 7, July, 2004, Available: <http://iteslj.org>.

Փուլ 1. Ուսուցիչը գրատախտակին գրում է մի ասույթ, որում որոշ բառեր նշված չեն, օրինակ, "A room without is like a body without soul." (Cicero).

Փուլ 2. Ուսուցիչը առաջարկում է սովորողներին կռահել այդ բառը՝ էլ նեղով համատեքստից:

Նրանց ուշադրությունը պետք է ուղղել խոսքի հեղինակի վրա: Ուսուցիչը նշում է, որ եթե հեղինակը, օրինակ Ֆրանկլինն է, Մ. Տվենը, Բ. Շոուն և այլք, ուրեմն մտքերը կլինեն իմաստուն կամ հումորային:

Փուլ 3. Երբ բաց թողնված բառերը լրացվում են (օրինակ "A room without books is like a body without soul." (Cicero), ուսուցիչը սկսում է քննարկում այն թեմայի շուրջ, որն սկզբում ներկայացրել էր, օրինակ՝

Do you agree with the statement?

How do you understand it?

Is it really so in your life?

Արդյունքում ստեղծվում է բարեհունչ հաղորդակցական միջավայր, սովորողները ներգրավվում են խոսքային գործունեության ոլորտ, նրանցից յուրաքանչյուրը ձգտում է արտահայտել իր կարծիքը, իսկ արդյունքում նոր բառի ներմուծումը կատարվում է սահուն և հետաքրքիր:

Այսպիսով, բառանյութն ընտրելիս կամ ներմուծելիս էական է հաղորդակցության թեման, այն պետք է լինի արժանահավատ (authentic), սովորողներին հետաքրքիր: Դա շատ կարևոր է նրանց սովորելու ներքին պահանջմունքը խթանելու, ակտիվ փոխներգործություն ծավալելու համար: Մյուս կողմից՝ նմանատիպ վարժարանների կանոնավոր ներմուծման արդյունքում կզարգանան սովորողների նաև դատողական, դիսկուրսային, վերլուծահամադրական խոսքային ունակությունները:

Բնավոր խոսքի ուսուցման գործընթացում էական է առողջանության կարևորության հաշվառումը: Այն ծառայում է՝ տարանջատելու հոսքը, ընդգծելու բառի առանցքային իմաստը: Սովորաբար ժամանակակից անգլերենի առողջանությունը յուրացնում են վարժանիների ու կրկնավարժանիների միջոցով: Առողջանությամբ կարելի է փոխել նախադասության կամ բառի ողջ իմաստը: Ուստի դասագրքերը բացի, շատ կարևոր է, որ սովորողները լսեն և կրկնօրինակեն լեզվակիրների խոսքը (live speech): Այս կապակցությամբ սեղին է նշել նաև, որ անգլերենում շեշտի միջոցով խոսողը տարբերակում է գոյական, բայ խոսքի մասերը: Հաջորդիվ ներկայացնում ենք բառեր՝ գոյականներ իրենց համապատասխան բայերով: Երբ շեշտվում է առաջին վանկը, բառը գոյական է, իսկ երբ վերջինը՝ բայ⁶:

Կան որոշ միավորներ, որոնք նման են վերոնշյալ բառերին, սակայն նրանք չունեն շեշտի փոփոխություն, օրինակ. CONTACT, DIScount, FINance, INTERest; նաև conSENT, conTROL, disGUISE, diVORCE.

⁶ Beare K., Teaching grammar in an ESL/EFL Setting. – The Internet TESL Journal, Vol. X, N 7, July, 2004, Available: <http://iteslj.org>.

Այնուամենայնիվ, յուրաքանչյուր բառ ունի շեշտ: Հարկ է նշել, որ շատ հաճախ նախադասության իմաստը կարող է փոխվել շեշտի փոփոխման հետ, օրինակ, հետևյալ նախադասության մեջ.

"I don't like to be late."

- Շեշտը "I" բառի վրա. իմաստն այն է, որ բոլորը սիրում են ուշանալ, իսկ խոսողը՝ ոչ:
- Շեշտը "don't" բառի վրա. բոլորը գտնում են, որ խոսողը սիրում է ուշանալ, բայց նա չի սիրում:

սիրում:

- Շեշտը "like" բառի վրա. խոսողը ցույց է տալիս, որ ինքը չի ընդունում ուշանալը կամ նույնիսկ ատում է:

- Շեշտը "late" բառի վրա. խոսողը ցույց է տալիս, որ ինքն ամենից շատ ատում է ուշանալը:

Օրինակից հետևում է, որ տարբեր բառեր շեշտելու դեպքում փոխվում է նախադասության իմաստը: Շատ անգամ սովորողները անգլերենով հաղորդակցվելիս չեն հետևում առաջանությանը: Որպես հետևանք՝ նրանց խոսքը չի հնչում գեղեցիկ, փոխարենը այն ձանձրալի ու անհրապույր է թվում: Ուստի ուսուցիչը պետք է ճիշտ ցուցումներ տա աշակերտներին նոր բառեր ներմուծելիս, որ նրանք ոչ միայն գրագետ խոսեն, այլև հետևեն խոսքի ճիշտ արտաբերմանն ու մեղեդայնությանը:

Կարևոր է ևս մեկ առանձնահատկություն, որը հատուկ է անգլերենի բանավոր խոսքին: Դա վերաբերում է բարձր տոնայնության (high pitch) և նոր տեղեկայթի կապին:

Բանավոր խոսքում տոնային միավորների վերջում տոնի բարձրությունը ենթադրում է խոսքի շարունակություն, իսկ ցածր տոնը՝ ավարտ: Հետևաբար, նոր բառերի ներմուծման գործընթացում այս առանձնահատկությունը ևս պետք է հաշվի առնել:

Ամենից առաջ ճիշտ կլինի նոր բառերի ներմուծման գործընթացը զուգակցել բառապաշարի և ֆերականության ուսուցման հետ: Պետք է միշտ հնարավորություն տալ սովորողներին՝ հղկել իրենց արտասանությունը, փառալերել նրանց՝ գրելու սովոր բառի ուղղագրությունն ու հնչույթների տառադարձումը:

Կարող ենք ասել, որ նոր բառերի ներմուծման գործընթացում ուսուցման ավանդական մեթոդներին զուգահեռ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը, հարկավոր է կիրառել նաև ուսուցան ակտիվ մեթոդներ: Ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ: Ներկայացնենք օտար լեզվի դասավանդման մի ֆանի ժամանակակից մեթոդներ, որոնք կարող են առավել արդյունավետ դարձնել ուսումնառության գործընթացը:

Կարող ենք ասել, որ օտար լեզվում նոր բառերի ներմուծման գործընթացում կարևոր է կիրառել հետևյալ մեթոդները⁷.

⁷ Mora J. Teaching Grammar in Context. San Diego State University, 2010. Available: <http://englishenkaysway.blogspot.com/>

- Դասավանդման համագործակցային-խմբային մեթոդ,
- Քեյս մեթոդը օտար լեզվի դասավանդման պրակտիկայում,
- Տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվի դասավանդման գործընթացում:

Լեզվի ուսուցման ընթացքում արդյունավետության առումով առաջ է գալիս համատեղ ուսուցման մեթոդը: Համատեղ ուսուցման մեթոդը կիրառվում է աշխարհի շատ երկրներում: Այս ուսուցումը հնարավորություն է տալիս աշակերտներին ավելի անկաշխանդ և ստեղծագործ ձևով մոտենալ հարցին: Փորձը ցույց է տալիս, որ միասին սովորելը ոչ միայն հեշտ է և հետաքրքիր, բայց և նկատելիորեն ավելի արդյունավետ է: Խմբային աշխատանքի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները⁸.

- Խմբում նպատակաուղղված միավորել տարբեր հմտությունների աշակերտների
- Խնդիրները, որոնք առաջադրվում են ֆննարկման համար, պետք է լինեն արդիական և հասկանալի, առաջացնեն գործնական կիրառության համար հետաքրքրություն
- Անհրաժեշտ է ընտրել խմբի ավագ, ով պետք է իր վրա վերցնի համակարգողի ուղղորդողի դեր⁹:

Իրավիճակի վերլուծության ֆեյս մեթոդ: Այս մեթոդը հիմնականում շեշտը դնում է սովորողների ակտիվ մտածողության վրա: Քեյս մեթոդը օտար լեզվի դասավանդման պրակտիկայում հնարավորություն է տալիս զարգացնելու աշակերտների ստեղծագործական և ֆննարկողական մտածողությունը՝ գործածելով դրանք խնդիրների լուծման ժամանակ, ինչպես նաև վերլուծելու ստացված արդյունքները, ցույց տալու դրանց կիրառելիությունը նմանատիպ այլ իրավիճակների համար, քանի որ ստեղծագործական, ճանաչողական և մասնագիտական գործունեության ժամանակ աշակերտները միաժամանակ կիրառելու են իրենց մտավոր բոլոր հմտություններն ու կարողությունները:

Տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվի դասավանդման գործընթացում: Ժամանակակից կրթական համակարգում գնալով ավելի շատ է շեշտը դրվում տեղեկատվության հետ աշխատանքի վրա: Աշակերտների համար կարևոր է դառնում կարողանալ ինֆորմայն ձեռք բերել լրացուցիչ նյութեր, կարծիք հաղորդել կարդացածի վերաբերյալ և այլն: Օտար լեզվով տեղեկատվության հետ աշխատանքը, հատկապես, եթե հաշվի առնենք այն հնարավորությունները, որոնք մեզ է առաջարկում համացանցը, դառնում է բավականին հրատապ: Համակարգիչն արդյունավետ և հարմար օգնական է օտար լեզուների ուսուցման ժամանակ, քանի որ լեզու սովորելիս ինտերակտիվ շփման առկայությունը պարտադիր պայման է:

Հստ էության, օտար լեզուների դասավանդումը դարձնում իրականացնում է գործունեական, հաղորդակցական, ճանաչողական, հասարակական, մշակութային և անհատական մոտեցումները, ինչը

⁸ Նույն տեղում

⁹ Richards J.C., Rodgers T.S. Approaches and methods in language teaching: A description and analysis. Cambridge: Cambridge University Press, 2001

հնարավորություն է տալիս աշակերտներին ձեռք բերել անձի հասարակական հարմարեցման և համաշխարհային մշակույթին հաղորդակից դառնալու համար անհրաժեշտ գիտելիքներ ու զարգացնել անհրաժեշտ հմտություններ և ունակություններ:

Օտար լեզուների դասագրքերի հիմնում ընկած են ինտեգրման, շերտավորման, հաղորդակցական ուղղվածության և ստեղծագործական ունակությունների զարգացման սկզբունքները: Դասագրքերում վորձ է արված իրականացնել անգլերենի զարգացման համար այնպիսի վարժություններ, որոնք հիմնականում հիմնված կլինեն լեզվական միջնորդության՝ թարգմանությունների վրա: Նման մոտեցումը ապահովում է ինտեգրման սկզբունքի իրականացումը տարբեր սեռական ուղղվածություն ունեցող սեֆստերում նրանց վերլուծության և մեկնաբանման ընթացքում, դաս-երկխոսություններում, դաս-ֆեննարկումներում և այլն:

Օտար լեզուների դասավանդման ընթացքում նոր բառերի ներմուծման արդյունավետությունը և լեզվի կիրառությունը առավելագույնս ապահովելու համար անհրաժեշտ է կիրառել ուսուցման համապատասխան մեթոդներ: Իսկ այդ մեթոդների շարքում իր ուրույն տեղն ունի գիտակցական համադրական կամ թարգմանության մեթոդը:

Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ սովյալ լեզուն դասավանդելու ընթացքում ուսուցիչը պետք է դասը վարի ոչ միայն սովյալ օտար լեզվով, այլ նաև օգտագործի մայրենի լեզուն՝ սովորեցնելիս անձանք լեզվական հասկացությունները ներկայացնելու համար: Ուստի դասավանդման գործընթացի բարեհաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարատեսակ մոտեցումներ ընտրել այս մեթոդի կիրառման և համակարգման համար, քանի որ ուսուցչի մեթոդական իրազեկությունը ուսումնական գործընթացի արդյունավետությունն ապահովող կարևորագույն գործոններից առաջինն է: Հենց դրանով է պայմանավորված հանձնարարականի ճշտությունը¹⁰.

- սովորողը պետք է ճիշտ պատկերացնի, թե ինչ է անում և ինչու է անում,(ուսուցչի կողմից տրված հանձնարարականները պետք է հասկանալի լինի յուրաքանչյուրի համար: Ուսուցիչը անհրաժեշտության դեպքում պետք է հանձնարարականները ներկայացնի իչնպես դասավանդվող օտար լեզվով, այնպես էլ անհրաժեշտության դեպքում մայրենի լեզվով)
- սովորողը պետք է տեղեկացված լինի այն մասին, թե ինչ են իրենից սպասում,(այսինքն՝ ուսուցիչը պետք է օգտագործելով թարգմանությունների կամ գիտակցական համադրական մեթոդը իր խոսքը տեղ հասցնի սովորողներին)
- սովորողը պետք է վստահ լինի նրանում, որ ուսուցիչը միշտ կօգնի և կսատարի իրեն:

Թարգմանելու միջոցով լիարժեք ընկալելի դարձնելով տեխստը՝ հնարավոր է դառնում սովորողի մտ զարգացնել նաև բառափոխման (paraphrasing) հմտությունները. երբ ուսանողն արդեն լիովին ընկալել և յուրացրել է նոր բառապաշարը՝ կարելի է ամրապնդել այն բառափոխման միջոցով: Այս հմտության

¹⁰ Mora J. Teaching Grammar in Context. San Diego State University, 2010. Available: <http://englishenkaysway.blogspot.com/>

գարգացումը նույնպես շատ կարևոր է օտար լեզու դասավանդելիս: Այս մեթոդը նպաստում է, որ սովորողի նոր ձեռք բերած բառապաշարի գիտելիքներն է՛լ ավելի կայունանան. քանի որ, երբ ուսանողը կարողանում է նախադասությունը կամ տեքստի ցանկացած հատված վերարտադրել՝ փոխարինելով որոշակի բառեր իրենց համանիշներով կամ բացատրություններով, ապա, կարելի է փաստել, որ նոր բառապաշարը լիովին ընկալվել և յուրացվել է: Ավելին, բառափոխման հմտության շնորհիվ աշակերտը նաև հեշտությամբ կարողանում է տեքստը վերարտադրել թե՛ բանավոր և թե՛ գրավոր կերպով:

Այստեղ կարևոր է նաև բառիմաստի ճիշտ կիրառումն ըստ համապատասխան համատեքստի: Այն է՝ երբ ուսանողին հանձնարարվում է բառափոխում կատարել՝ պետք է վերջիններիս օգնել ճիշտ կատարել հանձնարարությունը, քանի որ շատ հաճախ, դեռևս բավարար փորձ չունեցող ուսանողները սխալ են կատարում հանձնարարությունը՝ մեխանիկորեն փոխարինելով բառերը որոշակի համանիշներով:

Այս դեպքում խախտվում է տեքստի իմաստը, քանի որ ոչ բոլոր համանիշներն են ճիշտ ընտրվում: Ավելին, տարբեր բառեր պահանջում են տարբեր նախդիրներ կամ կապեր, որոնց առումով նույնպես սովորողը պետք է ուշադիր լինի, պետք է կարողանա անսխալ փոխակերպել նախադասությունը և կատարել համապատասխան փոփոխությունները՝ ճիշտ փոխանցելով իմաստը:

Վերը նշվածը վկայում է այն մասին, որ օտար լեզվի դասերին նոր բառերի ներմուծման և լեզվական համակարգի ուսումնասիրության ոլորտում կարևոր նշանակություն ունի օտար լեզվի և հայերենի գուգորդումը մայրենի լեզվի ազդեցության հաշվառման նպատակով:

Ազգային դասագրքերի առավելությունն այն է, որ գուգորդական համեմատության սվյալները թույլ են տալիս ոչ միայն նախօրոք գուշակել մայրենի լեզվի բացասական ազդեցությունը և կանխել հնարավոր սխալները, այլև օգտագործել դրական փոխազդման դեպքերը՝ անհրաժեշտ լեզվական հմտություններ ու կարողություններ ձևավորելու և ամրապնդելու նպատակով: Օրինակ՝ չնայած երկու լեզուներում թվի կարգը որոշ նմանություններ ունի, այնուամենայնիվ, առանձին դեպքերում հայերենի գոյականների հոգնակի թվի առկայությունը կարող է բացասական փոխազդման աղբյուր ծառայել¹¹:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով աշխատանքը, կարող ենք նշել, որ չափազանց կարևոր է ուսուցման գործընթացը կազմակերպել ճիշտ և ճկունություն պարունակող մեթոդների կիրառմամբ: Այս տեսանկյունից կարևոր է հատկապես շեշտադրել օտար լեզվի դասերին նոր բառերի ներմուծման գործընթացի կարևորությունը և դրա կազմակերպման ճիշտ մեթոդների կիրառությունը:

¹¹ Cook V. Second Language Learning and Language Teaching. Melbourne: Edward Arnold/Hodder Headline Group, 1991.

Համակարծիք ենք մերժաբան Ա. Սանչեսի հետ, որը փաստում է, որ մերձոգն իրականում ոչ թե նպատակ է, այլ մեր առջև դրված նպատակների հասնելու լավագույն միջոց: Սակայն այդ միջոցը պահանջում է ուսուցչի և աշակերտի սերտ փոխհամագործակցություն, այլապես միայն մերձոգի ճիշտ ընտրությունը դեռևս բավարար չէ լեզվի ուսուցման ոլորտում դրական արդյունքի հասնելու համար: Այս տեսանկյունից կարևոր ենք համարում ժամանակ առ ժամանակ վերանայել ու լրամշակել ուսուցման առկա մերձոգները, դրանց կիրառման մոտեցումներն ու տեխնոլոգիաները, որոնք, պայմանավորված օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներով, կարող են կորցնել իրենց արդյունավետությունն ու արդիականությունը:

Այսօր բազմաթիվ հիմնական մերձոգական նորարարություններ կապվում են ուսուցման ժամանակակից մերձոգների կիրառման հետ: Ուսուցումը ինչ-որ իմաստով նշանակում է փախանցել կամ գրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի հետ: Այսպիսով, ժամանակակից ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Այն ուսուցողական տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման, սովորողի ազատության վրա:

Կարող ենք ասել, որ օտար լեզվում նոր բառերի ներմուծման գործընթացը կարող է արդյունավետ լինել միայն լեզվական նյութի նվազեցման և մոտավորեցման սկզբունքի պահպանման դեպքում: Մոտավորեցումը հասկացվում է որպես այնպիսի մոտավոր լեզվական միջոցների ընտրություն, որոնք հնարավորություն են ընձեռում ուսուցման տվյալ փուլում իրագործել հաղորդակցական նպատակը: Բացի այդ՝ ծրագրերը սահմանում են այն նվազագույն անհրաժեշտ լեզվական նյութը, որի յուրացումը հնարավորություն է տալիս աշակերտին հաղորդակցվելու՝ խոսելու, գրելու, կարդալու և ունկնդրելու:

Օգտագործված գրականության ցանկ

1. Beare K., Teaching grammar in an ESL/EFL Setting. - The Internet TESL Journal, Vol. X, N 7, July, 2004, Available: <http://iteslj.org>.
2. Cook V. Second Language Learning and Language Teaching. Melbourne: Edward Arnold/Hodder Headline Group, 1991.
3. Drake S. Planning Integrated Curriculum: the Call to Adventure. Alexandria, VA, ASCD, 1993.
4. Harmer J., How To Teach English, Pearson, Longman, 2010. 288 p.
5. Mora J. Teaching Grammar in Context. San Diego State University, 2010. Available: <http://englishenkaysway.blogspot.com/>
6. Thornbury S., How to Teach Grammar, Pearson, Longman, 2010. 182 p 6. Kumaravadivelu B. Understanding Language Teaching. From Method to Postmethod, San Jode State University, 2006.
7. Richards J.C., Rodgers T.S. Approaches and methods in language teaching: A description and analysis. Cambridge: Cambridge University Press, 2001

